

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն  
1997 - 2007

**Ռադիկ ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

*(ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս)*

Հայաստանի գիտությունը միշտ էլ հպարտացել է Գյումրու զավակների՝ գիտության մեջ ունեցած մեծ ավանդով: Ես կհիշեի ակադեմիկոսներ Շահինյանին, Համբարձումյանին, Սահակյանին, Թալալյանին, տարբեր գիտությունների ասպարեզում հեղինակավոր շատ դեմքերի, էլ չեմ խոսում մեր գրականության ու արվեստի հսկաների՝ Շերամի, Իսահակյանի, Շիրազի և այլոց մասին: Այսօր Գյումրիում ակադեմիական երեք հիմնարկությունների, բազմաթիվ բուհերի առկայությունը վկայում է, որ քաղաքն աղետից հետո սկսում է ապրել նաև գիտական կյանքի զարթոնք: Դրանում, անկասկած, իր տեղն ու օրավարը աճող դերակատարումն ունի Շիրակի հայագիտական կենտրոնը:

Իհարկե, 10 տարին գիտահետազոտական հիմնարկի համար մեծ ժամանակ չէ: Մակայն այդ տարիների ընթացքում մեր Ակադեմիայի այս կենտրոնում հասցրել են բավական գործ կատարել Շիրակի տարածաշրջանի հնագիտական, ազգագրական և հայագիտական այլ բնույթի հետազոտությունների ոլորտներում: Հայագիտության՝ որպես մեր նորանկախ երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող գործունի ըստ ամենայնի խթանումը մենք համարում ենք Գիտությունների ազգային ակադեմիայի առաջնահերթ հիմնախնդիրներից ամենակարևորը: Խոշոր համալիր ծրագրեր են մշակվում՝ ապահովելու համար երկրում հայագիտության զարգացման բարձր մակարդակ և լավագույն հնարավորություններ: Դեռ իրենց գիտական արժևորմանն են սպասում մեր ժողովրդի հոգևոր և նյութական բազմաթիվ զանձեր ու անսպառ հարստություններ: Հիմա այս կարևոր գործին է լծվել նաև մեր Ակադեմիայի ամենաերիտասարդ հայագիտական ստորաբաժանումը: Մենք գոհ ենք նրա աշխատանքի արդյունքներից: Եղել են Շիրակի կենտրոնում, զրուցել նրա աշխատակիցների հետ, ի մոտ ծանոթացել են նրանց աշխատանքին: Մեծ հաջողություններ են ցանկանում նրա երիտասարդ ու ստեղծագործ գիտական անձնակազմին: Կասկած չունեմ, որ շենքային պայմանների մոտալուտ արմատական բարելավումը կենտրոնի համար կբացի գործունեության նոր ոլորտներ, որոնց մասին ինձ պատմել են: Ուզում եմ նաև ավելացնել, որ կենտրոնի ստեղծումով հասունացել է ակադեմիական երեք կառույցների հիմքի վրա Գյումրիում ԳԱԱ մասնաճյուղ բացելու դեռ կես դար առաջ պլանավորված, բայց չիրականացած ծրագիրը, մասնավորապես որ ներկայումս քաղաքն արդեն ունի Ակադեմիայի իր տեղական թղթակից անդամները, որոնք աշխատում են Գյումրիում: Սա կարևոր է մասնաճյուղ ունենալու համար: Հույս ունենք, որ առաջիկայում այստեղից Ակադեմիայի անդամներ էլի կունենանք, կավարտվի շենքի կառուցումը, և ԳԱ մասնաճյուղը ձեռնամուխ կլինի մասնաճյուղի ձևավորմանը:

**Վլադիմիր ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ**

*(ԳԱԱ ակադեմիկոս)*

Հայաստանի Հանրապետությունում գիտական հաստատությունները տեղավորված են գերազանցապես Երևանում: Երկար տարիներ, տասնամյակներ անընդհատ խնդիր էր դրվում, հատկապես ԳԱԱ նշանավոր պրեզիդենտ ակադեմիկոս Վ.Համբարձումյանի կողմից, որպեսզի դրանք բաշխվեն նաև Հայաստանի մյուս մարզերում: Մինչև այժմ տարվող այդ ջանքերից հաջողվել է միայն հայագիտական և հասարակական գիտությունների բնագավառում Գյումրիում ունենալ մի Կենտրոն: Որևէ այլ մարզում հասարակական գիտությունների գծով ակադեմիական հաստատություն չունենք: Գյումրիում 10 տարի առաջ ստեղծված հայագիտական պատմամշակութային այս կենտրոնը այդ տարիների ընթացքում լայն գործունեություն ծավալեց: Այն ստեղծվեց Գյումրիում, որովհետև Գյումրին ազգագրական, բանահյուսական, պատմագիտական առումներով մեր ամենահարուստ շրջաններից մեկն է՝ ավանդույթները լավ պահպանած: Եվ պետք է ասել, որ 10 տարվա ընթացքում կենտրոնը՝ ոչ մեծ կազմով, մասնավորապես նյութական ծանր վիճակում, բավական մեծ աշխատանք կատարեց:

Կենտրոնը ղեկավարում է մեր լավ գիտնականներից մեկը՝ Ս. Հայրապետյանը, որը կարևոր գործ արեց, և բավական է ասել, որ հրատարակչական մեծ դժվարությունների պայմաններում 9 հատոր գիտական աշխատություններ հրատարակեց: Եվ այդ 9 հատորները գավառական որակով արված աշխատանքներ չեն, այլ՝ գիտական բարձր մակարդակով և՛ պատմական, և՛ ազգագրական, և՛ հնագիտական, և՛ երաժշտագիտական լուրջ ուսումնասիրություններ: Ամեն տարի գիտական լուրջ նստաշրջաններ են կազմակերպվում, և դրանց ամենագործուն մասնակցություն են ունենում Ակադեմիայի մեր հասարակագիտական բոլոր օջախները՝ Հնագիտության և ազգագրության, Արևելալագիտության, Պատմության, Արվեստի, Լեզվի, Գրականության, Փիլիսոփայության և սոցիոլոգիայի ինստիտուտները: Մենք մեծ նշանակություն ենք տալիս այդ կենտրոնին, որն սկզբում փոքր էր և գտնվում էր Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կազմում՝ որպես մասնաճյուղ, իսկ այժմ մեր Ակադեմիայի հայագիտական և հասարակական գիտությունների բաժանմունքի կարևոր ստորաբաժանումներից մեկն է: Ձանում ենք կենտրոնին օգտակար լինել, որպեսզի այստեղ ավելի մեծ ծավալի աշխատանքներ կատարվեն: Փոքրաքանակ, բայց շատ լավ կադրերի և սուղ ֆինանսական միջոցների պայմաններում կենտրոնը կատարում է շատ մեծ, կարևոր գործ, արժեքավոր աշխատանք Շիրակի հայագիտական ուսումնասիրության բնագավառում:

Կենտրոնը բոլորեց իր հոբելյանը՝ առաջին 10-ամյակը: Հոբելյանը նաև նրա համար է, որ անցյալն ամփոփեն և ապագան նախատեսեն: Կարծում եմ՝ ԳԱԱ-ն ավելի կընդլայնի իր օժանդակությունը թե՛ ֆինանսատնտեսական, թե՛ հրատարակչական առումով, որպեսզի կենտրոնը հնարավորություն ունենա ընդլայնելու իր գործունեությունը Շիրակին մվիրված նոր ուսումնասիրությունների իրականացման, գիտական նոր կադրերի պատրաստման ուղղությամբ, ավելի խորացնի ու ծավալի իր կապերը ներսում և դրսի գիտական աշխարհի հետ և իրավամբ դառնա նաև հանրապետությունից դուրս ճանաչված հայագիտական օջախ:

**Աշոտ ՄԵԼՔՈՆՅԱՆ**

*(ԳԱԱ թղթակից անդամ, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր)*

1991թ. անկախության ձեռք բերումից հետո, անկասկած, Ազգային գիտությունների ակադեմիայի տեղն ու դերը մեր հասարակության մեջ խիստ բարձրացավ, չնայած գտնվեցին նաև մարդիկ, որոնք ձեռնոց նետեցին Ակադեմիային և գտնում էին, որ մեր նոր ժամանակներում այսպիսի հզոր գիտական կառույց մեր փոքրիկ հանրապետությանը պետք չէ: Բայց, բարեբախտաբար, այդ ժամանակներն անցան, և իրողություններն ու արժեքները իրատեսորեն գնահատելու կարողությունը մեզանում հաղթեց: Եվ ոչ միայն մնան մոտեցումը հաղթանակեց, այլև մեր գյումրեցի գործընկերները կարողացան ապացուցել, որ Գյումրիի երկրաշարժից հետո եթե իսկպաես լիարժեքորեն պիտի վերականգնվի և գտնի իր ազգային նախկին նկարագիրը, նա պետք է ունենա ազգային ակադեմիայի Շիրակի մասնաճյուղ: Երբ Հայագիտական հետազոտությունների կենտրոնը 10 տարի առաջ ստեղծվեց, շատ շատերիս մեջ, պետք է ասեմ, նաև իմ մեջ լուրջ կասկածներ կային: Դրված էր Երևանում ԳԱԱ-ի վերացման խնդիրը, ես սա ասում եմ ամենայն լրջությամբ: Բնականաբար, թող ներվի ինձ այս բառի համար, «զավառ» համարվող Գյումրիում, ըստ երևույթին, շոայություն էր դիտվում մնան կենտրոն ստեղծելը: Բայց բարեբախտաբար հաղթեց ողջախոհությունը: Կենտրոնը ստեղծվեց և 10 տարիների ընթացքում ապացուցեց, որ ինքը ոչ միայն ապրելու իրավունք ունի, այլ նաև ԳԱԱ հայագիտական բաժանմունքի համակարգում իր շատ լուրջ տեղն ունի: Շատ ուրախսալի է, որ այն դիմացավ բոլոր փորձություններին և ունեցավ նաև իր դիմագիծը՝ սկզբում Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հենքի վրա, իսկ հետո, հաջողությունների այս բովով անցնելով, նա նաև նվաճեց ինքնուրույն լինելու իրավունքը: Մինչև վերջերս էլ ոմանք դեռևս թերահավատ էին. արդյոք նպատակահարմա՞ր էր Գյումրիում մնան կենտրոնի ստեղծումը, զուգահեռներ էին անցկացնում հանրապետության այլ մարզերի հետ՝ առաջարկելով նույն տրամաբանությամբ մնան կենտրոններ ստեղծել նաև Սյունիքում, Լոռիում: Նույնիսկ փորձեր եղան, բայց ոչինչ չստացվեց: Մինչդեռ գյումրեցի մեր գործընկերները հաջողությամբ պսակեցին իրենց նպատակը: Նախ, որ դա նրանց տարիների երազանքն էր, երկրորդ, որ

հանրապետության երկրորդ քաղաքն իր տեղական լուրջ գիտական ներուժն ունեւ, որով միշտ էլ սնել է մայրաքաղաքին: Եվ վերջապէս, մեր իրականության մեջ, Շիրակը, մասնավորապէս Գյումրին ազգային նյութական ու հոգևոր ինքնատիպ ու մեծարժէք մշակույթի կրող է, և շատ ուրախալի է, որ նման կենտրոնի ստեղծումով Գյումրու նկարագիրն ազգային իմաստով շատ ավելի հստակ դարձավ: Այն ժողովածուները, մենագրութիւնները, որոնք պատրաստվեցին կենտրոնում, այն գիտական արտադրանքը, որ տրվեց այստեղ տասը տարիների ընթացքում, մեկ անգամ ևս ապացուցում են, որ այս կենտրոնն իսկապէս հայագիտական հետազոտութիւններ կատարող մեր հիմնարկների շարքում իր ուրույն տեղն ու նկարագիրն ունի:

### Սևադա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*(ԳԱԱ քղթակից անդամ, գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր)*

Այսօր 10-ամյա հետազոտութիւնների կենտրոնի գոյության առաջին տասնամյակը եղել է նրա կազմակերպման, ձևավորման, ինքնահաստատման, արդյունավետ գործունեության, համընդհանուր ճանաչման և ընդլայնման անմախաղէպ տարիներ:

1997թ.-ի աշնանը հիմնադրված Շիրակի հայագիտականը փաստորէն ԳԱԱ Երկրագիտության և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտից և ՀԿԲ-ի բազայի վրա ստեղծված հատուկ փորձակոնստրուկտորական տեխնոլոգիական ինստիտուտից հետո դարձավ երրորդ ակադեմիական օջախը Գյումրիում: Կարծում են՝ սա արդէն լուրջ փաստարկ է Գյումրիում Գիտութիւնների ազգային ակադեմիայի Հյուսիսային բաժանմունք ունենալու անհրաժեշտության օգտին:

Երիտասարդ հայագետների մի սովոր խումբ, չնայած ընդհանուր առմամբ գիտութեամբ զբաղվելու համար անչափ անբարենպաստ պայմաններին, լրջորէն և մեծ արդյունավետությամբ է այստեղ զբաղվում հնագիտության, պատմության, ազգագրության, ժողովրդական երաժշտության, էթնոսոցիոլոգիայի ու բանահյուսության ոլորտներում Շիրակի հարուստ պատմամշակութային ժառանգության ուսումնասիրմամբ: Մաթթում են Հայագիտականին նոր հաջողութիւններ:

### Խաչիկ ԲԱԴԻԿՅԱՆ

*(բանասիրության դոկտոր, պրոֆեսոր)*

Շնորհավորում են Շիրակում այս գիտական օջախի հիմնադրման 10-ամյակը: Հրաշալի գործ կատարեց մեր ազգային ակադեմիան՝ այս տարածքում հիմնելով գիտական մի կենտրոն, որը մեծ դերակատարում ունեցավ և, վստահ են, հետագայում էլ կունենա Շիրակի պատմամշակութային ժառանգության, ազգային ավանդույթների, բանահյուսության, արվեստի ու բազմազան արհեստների ուսումնասիրության ասպարեզում: Քանիցս առնչվել են կենտրոնի գիտնականների հետ և զարմացած են այդ շնորհալի մարդկանց դժվարութիւններից չերկնչելու, կամքի, ջանասիրության ու գյումրեցիական պատվախնդրությամբ աշխատելու պատրաստակամության վրա:

### Սերգեյ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

*(երկրագիտության դոկտոր, պրոֆեսոր)*

Գիտական կենտրոնի կայացման համար 10 տարին մեծ ժամանակաշրջան չէ, որովհետև այդ ընթացքում պետք է իրականացնել մի շարք կազմակերպչական, որոնողական աշխատանքներ, մասնավորապէս, լուծել մասնագետների խնդիրը, ընտրել հետազոտական առաջնահերթ ուղղութիւնները, նորմալ աշխատանքային պայմաններ ստեղծել, կապեր հաստատել այլ, նաև միջազգային գիտական կառույցների հետ և այլն: Ի պատիվ Շիրակի հայագիտական հետազոտութիւնների կենտրոնի՝ պետք է ասեն, որ այդ կարճ ժամանակամիջոցում նրանց հաջողվել է իրականացնել թվարկածս աշխատանքները, ստեղծել մնայուն արժէք ներկայացնող գործեր, հրատարակել «Գիտական աշխատութիւններ»-ի մեկ տասնյակ հատորներ, կազմակերպել գիտաժողովներ, կապեր հաստատել տարբեր, նաև միջազգային գիտական հեղինակավոր կենտրոնների հետ: Կենտրոնն ունի բարձրակարգ պատմաբաններ, ազգագրագետներ,

հնագետներ, երաժշտագետներ, ընդ որում գիտաշխատողների 80 տոկոսից ավելին ունի տարբեր գիտական աստիճաններ, իսկ սա շատ կարևոր ձեռքբերում է:

Այս բոլորը խոսում են այն մասին, որ կա լավ կազմակերպություն, լավ գիտական օջախ, հիանալի բազա է ստեղծվել հետազա հետազոտությունների համար: Ընդհանրապես են առաջին հերթին աշխատակիցներին, երկրորդը՝ մեր մարզի ազգաբնակչությանը, բոլորիս՝ կենտրոնի ստեղծման 10-ամյակի կապակցությամբ: Մենք մարզում իսկապես խիստ կարիք ունեինք այսպիսի մշակութային, գիտական օջախի: Ի վերջո, մարզի, երկրի դեմքը ցույց տվող մշակույթն ու գիտությունն են:

#### **Վարդևան ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*(մանկավարժության դոկտոր, պրոֆեսոր)*

Հիմնադրման առաջին իսկ օրերից ԸՀՀ կենտրոնը լծվել է հայագիտական հետազոտությունների շնորհակալ գործին՝ զարգացնելով այս բնագավառի լավագույն ավանդույթները, ստեղծելով նորերը: Այսօր այլևս անառարկելի է նրա դերը Այրարատ աշխարհի Շիրակի պատմական գավառի հարուստ ազգագրության ու բանահյուսության, հնագիտության ու վիճակագրության ուսումնասիրման բնագավառում: Դրանց արդյունքները մենք տեսնում ենք կենտրոնի կողմից հրատարակված ժողովածուներում: Հատկապես կարևորում ենք այն սերտագույն համագործակցությունը, որ ստեղծվել է կենտրոնի ու Գյումրու ամենահին ու հեղինակավոր բուհի՝ մանկավարժականի հայագիտական ամբիոնների միջև:

#### **Գուրգեն ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*(բանասիրության դոկտոր, պրոֆեսոր)*

Դուք՝ շիրակցիներդ, այս տեսակետից հրաշալի օրինակ եք ծառայում մեր հայրենիքի բոլոր տարածաշրջանների համար: Դուք արդյունավետ եք օգտագործում ձեր խոշոր գիտական ներուժը և մանրազնին ուսումնասիրում ու դրանով իսկ արժևորում եք ձեր անզուգական բնաշխարհի հնագիտական, ազգագրական, մշակութային հուշարձանները, սովորույթներն ու կենցաղը, որոնք հայ ժողովրդի կյանքում ունեն իրենց ուրույն տեղը: Դեռևս Բագրատունյաց հզոր տոհմի իշխանության ժամանակներից սկսած և դրանից էլ շատ առաջ Շիրակն ունեցել է ազգագրության, բանահյուսության և մշակութային հարուստ ավանդներ, որոնք առ այսօր ներկա սերունդը, ի դեմս ձեզ, պահում-պահպանում է արժանապատվորեն:

Արդեն 10 տարի է՝ ձեր Հայագիտական հետազոտությունների կենտրոնն իր գործուն ու արգասավոր մասնակցությունն է բերում մեր հանրապետության գիտական մտքի առաջընթացին: Ասածիս խոսուն վկաները կենտրոնում իրականացվող գիտական տարբեր ծրագրերն են, նաև ձեր կողմից պարբերաբար հրատարակվող «Գիտական աշխատություններն» են, որոնցում հրատարակվելը պատիվ է գիտության ուղին բռնած ամեն մի ստավորականի համար:

#### **Մամսոն ԴԱՎՈՅԱՆ**

*(տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր)*

Տարիներ առաջ, երբ երկիրը նոր էր անկախացել, և Գյումրին էլ դեռ խորությամբ կրում էր աղետի հետքերը, նման կենտրոն ունենալու գաղափարը թվում էր անիրագործելի: Սակայն մեծ ձգտումները ծնում են մեծ գործեր: Այդ ձգտումը կար, և այսօր Գյումրիում այդ ակադեմիական կենտրոնը հաջողությամբ գործում է, օր օրի մեր մարզի ու հանրապետության գիտական կյանքում նրա դերը դառնում է ավելի զգալի:

#### **Արարատ ԱՂԱՍՅԱՆ**

*(արվեստագիտության դոկտոր)*

Դժվար է գնահատել Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի դերն ու նշանակությունը Շիրակի մշակութային մասունքների գիտական ուսումնասիրության գործում, որը վերջին տասնամյակում մեծ թափ է առել:

Մենք բարձր ենք գնահատում սերտ կապերն ու ստեղծագործական շփումները, որոնք հաստատվել են Շիրակի հայագիտական կենտրոնի և Արվեստի ինստիտուտի միջև, որոնք իրականացվում են ի շահ հայ արվեստի վաղվա օրվա, ի նպաստ նրա հետագա առաջընթացի: Մեր ինստիտուտի գիտնականներից շատերն ակտիվորեն մասնակցում են կենտրոնի կողմից Գյումրիում պարբերաբար անցկացվող՝ Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված հանրապետական խոշորամասշտաբ գիտական նստաշրջանների աշխատանքին, Ձեր արվեստաբաններն իրենց գիտական առենախտությունները հաջողությամբ պաշտպանել ու պաշտպանելու են Արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհրդում: Եվ վերջապես, կենտրոնի գիտական աշխատությունների հրատարակված ամենամյա ժողովածուներում Դուք սիրահոժար էջեր եք տրամադրում նաև Արվեստի ինստիտուտի գիտնականներին: Մենք ուրախ ենք ձեր ձեռքբերումներով:

### **Ջենմա ԲԱՌՆԱՍՅԱՆ**

#### ***(քանասիրության թեկնածու, դոցենտ)***

Շնորհավորում եմ Շիրակի հայագիտականի 10-ամյակը: Իսկապես կայացած կառույց է, որը 10 տարի շարունակ գիտական հասարակության ուշադրությունը բևեռել է Գյումրու տարածաշրջանի ավանդույթների, ճարտարապետության, հնագիտության, բարբառների (սա հատկապես եմ նշում, քանի որ ինքս զբաղվում եմ դրանցով և երկու տարին մեկ պարբերաբար այստեղ գումարվող գիտաժողովների ժամանակ ներկայանում եմ Գյումրու տարածաշրջանի բարբառների ուսումնասիրությամբ): Ահա իմ գյումրեցի գործընկերների այդպիսի ակտիվ գործունեությունը ցույց է տալիս, որ կառույցը ոչ միայն կայացել է, այլև կարծես իր ձեռքն է վերցրել նախաձեռնությունը և արժանապատվորեն մրցում է հանրապետության մայրաքաղաքի շատ ու շատ գիտական հիմնարկների հետ: Միանգամայն արդարացված էր Գյումրիում Հայագիտական կենտրոն ստեղծելու Գիտությունների ազգային ակադեմիայի նախաձեռնությունը: Այդ կենտրոնը, կարելի է ասել, ոչ միայն դարձել է հանրապետության լավագույն գիտական հիմնարկներից մեկը, այլև ունի փայլուն ապագա: Դրանում չեմ կասկածում:

### **Հայկ ՀԱՐՈՅԱՆ**

#### ***(փիլիսոփայության թեկնածու, դոցենտ)***

Հիրավի, 10 տարի առաջ՝ 1997-ին, Գյումրիում նման գիտական կենտրոնի ստեղծումը նշանակալից իրադարձություն էր ոչ միայն Շիրակի մարզի, այլև հանրապետության մտավոր կյանքում, քանզի անցած տասը տարիների իր գիտական գործունեությամբ կենտրոնը որոշակիորեն նպաստեց տարածաշրջանում գիտական մտքի աշխուժացմանը, մտավոր ներուժի պահպանմանն ու զարգացմանը: Եվ իր հիմնական առաքելությունն իրականացնելիս, այն է՝ Շիրակ աշխարհի նյութական ու հոգևոր արժեքների հետազոտության ոլորտում գիտական լուրջ պրպտումներով նոր շունչ և թարմություն բերեց հայագիտության մեջ: Թող որ հետագա տասնամյակները կենտրոնի համար լինեն նորանոր ձեռքբերումների, նաև միջազգային ճանաչման ու գնահատման արգասավոր տասնամյակներ: